«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Առարկան՝ Հայոց եկեղեցու պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Գոհար Գասպարյան

Ուսումնական հաստատություն՝ 117

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ……3

1. ԱՌԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ……4

2. ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԱՌԱԿՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ……7

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……16

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի կրթական համակարգում ազգային և համաշխարհային մշակութային, մասնավորապես գրական արժեքների սերմանումը, դրանց փոխանցումը աճող սերնդին դիտարկվում են որպես նրանց ձևավորվող արժեհամակարգի կարևոր բաղադրիչ: Երեխաների արժեհամակարգի ձևավորման գործընթացում մշակութային արժեքների ձեռբերումը վերջիններիս ստեղծագործական բազմազան կարողությունների զարգացման աներկբա երաշխիք է, որն օգնում է նրանց կառուցելու աշխարհի սեփական պատկերը, մշակութային բազմազանության համայնապատկերում կողմնորոշվելու, պահելու և պահպանելու ազգայինը, պատրաստ լինելու մշակութային կառուցողական երկխոսության: Մարդու կողմից ստեղծված գրական արժեքներին հաղորդակից լինելը դրական ազդեցություն է թողնում երեխաների ստեղծագործական, գեղագիտական մտքի զարգացման վրա, մոտիվացնում է նրանց վարքագիծը, ապահովում է երեխաների և հասարակության միջև կայուն հարաբերությունները: Աստվածաշնչյան առակի ուսումնասիրման հարցը արդիական է, քանի որ մարդ արարածը կյանքի օրենքները սիրում է սովորել օրինակով, իսկ առակը տալիս է այդ հնարավորությունները. մարդու համար ընդօրինակելն ավելի հեշտ է, քան վերացական խրատը, ուստի հերոսների արարքներով բացահայտվում է ստեղծագործության գաղափարը, որն էլ նպաստում է աշակերտների՝ արդար, ազնիվ, ճշմարտախոս, աշխատասեր, քաջ, անվախ ու հայրենասեր մարդ դաստիարակվելուն:

Միանգամայն ընդունելի է այն կարծիքը, որ Աստվածաշնչյան առակների դաստիարակող էությունը, դերն ու նշանակությունը եղել և մնում է ողջ քրիստոնյաների հավատքի հիմքը, ինչպես Հիսուսն էր անուղղակիորեն խրատում իրեն լսող ու հետևող ժողովրդին՝ մեջբերելով առակներ: Ահա, թե ինչու նոր սերնդին ևս պետք է առաջնորդել, ուղղորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ նմուշներով, որոնք դեռ դարեր կպահպանեն իրենց ժամանակի թարմությունն ու դիպուկությունը, մտքի խորությունն ու լեզվի ճկունությունը:

1. ԱՌԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒ

Առակը խոսքի արտահայտման մի այնպիսի ձև է, որն ասելիքը բացատրում և ներկայացնում է բերվող առանձին օրինակի միջոցով կատարված ընդհանրացմամբ: Այսպիսով՝ առակը մի պատմություն և զրույց է, որից կատարվում է համապատասխան բարոյական եզրահանգում:

Առակի մեջ գաղտնագրված գաղափարները, բարոյական սկզբունքները, մարդկայինի մասին պատկերացումները ժողովրդի հավաքական կենսափորձով վավերացված մշտնջենական արժեքներ են, որոնք յուրաքաչյուր դարաշրջանում ընկալվում և իմաստավորվում են նորովի: Բացառություն չէ, իհարկե, մերօրյա իրականությունը: Հանկարծադեպ ու անակնկալ փոփոխություններն առաջացրել են բարոյական սկզբունքների, սոցիալական հարաբերությունների հախուռն արժեզրկում, նոր արժեքների նույնքան հախուռն ներխուժում կեցության տարբեր ոլորտներ: Անցումային շրջանի այս անխուսափելի երևույթներն իրենց ազդեցությունն են թողել աշակերտների հատկապես մտածողության, հոգեբանության, հուզաշխարհի վրա: Ուսուցչի խնդիրը պետք է լինի ժամանակի հետ կապված փոփոխության ձևերի մեջ մշտական արժեքների գոյակերպը նշմարելը, դրա հետ հաղորդակցվելու ուղիների միջոցները, նաև ընթերցող աշակերտներին գտնելը: Չմոռանանք նաև, որ անհատի արժեքների համակարգում մարդու լիակատար ու բովանդակալից կենսակերպը պայմանավորող շատ նախադրյալների շարքում վճռորոշ նշանակություն ունի գեղեցիկի զգացողությունը: Մարդկային մտածողության փոփոխության հետ փոխվում են նաև մարդու ճանաչողության սահմանները՝ եզրագծված ժամանակի և տարածության մեջ: Վերաիմաստավորման են ենթարկվում մարդու պատկերացումները շրջապատող աշխարհի վերաբերյալ: Եվ այդ համատեքստում առավելապես ակնհայտ է ուրվագծվում գեղեցիկի հասկացությունը: Առավել ևս այն պարագայում, որ հասարակական

զարգացման, աշխարհաճանաչման ամենատարբեր փուլերում այս հասկացությունը տարբեր մեկնություններ է ունեցել՝ սկսած աստվածային կամքի արտահայտությունից, սուբյեկտիվ էությունից, մինչև «բնության մոտ լինելը կամ բնությանը նմանվելը»: Դպրոցահասակի մտածողությունն առարկայական է, ամեն ինչ նա ուզում է տեսնել, զգալ սեփական փորձով. լինի դա իրապես, թե երևակայությամբ: Այդ պատճառով էլ գեղեցիկի մասին ուսուցչի զրույցները չպետք է դուրս գան առարկայական ոլորտից, պետք է ուղեկցվեն կյանքից կամ գրականությունից քաղված շոշափելի օրինակներով: Այս դիտանկյունից շատ կարևոր է դպրոցում աստվածաշնչիան առակագրության ուսուցումը: Առակների ուսուցման միջոցով հնարավոր է դառնում խթանել երեխաների և պատանիների գեղագիտական դաստիարակությունը, նպաստել նրանց քննական վերլուծության, ստեղծագործական և քննադատական մտածողության, համապատասխան գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գեղեցիկը տեսնելու, զգալու և կերտելու ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Առակը, լինելով ժողովրդական բանահյուսության մեջ ձևավորված փոքրածավալ էպիկական ժանր, մասնավորապես կենդանիների մասին հեքիաթի տարատեսակ, սեղմ սյուժեով ու այլաբանական բովանդակությամբ գրական հնագույն տեսակներից մեկը [7, 23], իր բարոյախոսությամբ օրինակ դառնալու և առ ակն կատարվածը ներկայացնելու ներքին հնարավորություններով յուրատիպ ազդեցություն կարող է ունենալ աշակերտների դաստիարակության վրա: Այլաբանորեն պատկերված, ներկայացված և կերպավորված ճշմարտությունը լսելի, հետաքրքիր և ուսուցողական է եղել բոլոր ժամանակներում: Ընդօրինակումն առավել դյուրին է, քան վերացական խրատն ընդունելը: Եվ այս պարագայում առավելապես առաջնություն է ստանում գեղարվեստական ընդհանրացված ժամանակն ու տարածությունը, որը դրսևորվում է առակում՝ ի հակադրումն կոնկրետ ժամանակի: Առակներն ստեղծում են աշխարհըմբռնում՝ ինչ-որ տեղ, ինչ-որ ժամանակ, որի համակարգում առաջնային արժեք են ձեռք բերում արծարծված թեմաների համընդհանրությունը, համամարդկայնությունը, բոլոր ժամանակներին և բոլոր տարածություններին բնորոշ լինելը : Բոլորովին պատահական չէ առակներում գեղարվեստական խոսքի այնպիսի հատկության

դրսևորումը, ինչպիսին է խոսքի կենդանությունը։ Աշակերտներին հաղորդակից դարձնելով խոսքի այս հատկությունը՝ հատկապես նշվում է, որ այն ապահովվում է լեզվամիջոցների այնպիսի գործածությամբ, որի շնորհիվ կարևորվում է նկարագրվող հասկացության առարկայորեն կոնկրետ արտահայտումը։ Այնուհանդերձ, պետք չէ նաև մոռացության տալ այն կարևոր հանգամանքը, որ Քրիստոսը որպես ժողովրդի հետ հաղորդակցման լեզու ընտրել էր առակը՝ որպես առավելապես ընդունելի, ընկալելի և սիրելի, նախընտրված միջոց։ Հայոց այբուբենն ստեղծելուց հետո Մեսրոպ Մաշտոցն ու իր աշակերտներն սկսեցին թարգմանել Աստվածաշունչը, և հենց հայերեն թարգմանված, հայերեն տառերով գրված առաջին նախադասությունը՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», Սողոմոնի առակներից էր։ Ընդ որում՝ բոլոր ժամանակներում բազում իմաստուններ իրենց խոսքն ու միտքը, քննադատությունը հասարակությանը փոխանցել են այլաբանորեն, առակի միջոցով։ Առակների հնագույն օրինակներ դիտարկվում են և՛ հին հնդկական, և՛ հունական, և՛ ընդհանրապես հին ժողովուրդների գրականության մեջ։

2. ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԱՌԱԿՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածաշնչում տեղ գտած առակներն ունեն իրենց ուրույն մեկնաբանությունը և դաստիարակչական նշանակություն: Նոր կտակարանում Հիսուսի առակներն են, որոնք ունեն դաստիարակչական նշանակություն: Հիսուսի առակները գտնվում են Աստվածաշնչի կանոնական ավետարաններում: Դրանք հիմնականում հանդիպում են Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի ավետարաններում, որտեղ այս առակներից շատերը կրկնվում են: Մինչդեռ Հովհաննես ավետարանիչը միայն երկու առակ է պատմում՝ «Գազանի և բարի հովվի առակը» 10-րդ գլխում և «Ճշմարիտ որթատունկի առակը» 15-րդ գլխում: Ավետարաններում ընդհանուր առմամբ կարելի է գտնել Հիսուսի 43 առակ:

Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները մեծ հետաքրքրությամբ են կարդում աստվածաշնչյան առակներ. առակներում հանդես եկող տարբեր երևույթների միջոցով ակնարկվում են մարդիկ՝ իրենց դրական ու բացասական գծերով: Առակների միջոցով սովորողը նոր որակներ է ձեռք բերում . նա արդարացիորեն դիտարկում և վերլուծում է մարդկային տարբեր բնավորություններ, քննադատում բացասականը՝ չարությունը, ծուլությունը, ագահությունը, ժլատությունը և այլն:

Հիսուսն իր առակների միջոցով ձգտում էր ուզուցանել ամենախորը հոգևոր ճշմարտությունները մի լեզվով, որը կարող էր հասնել բոլոր մարդկանց: Ուսուցման այս պարզ ոճը հակադրվում էր այն ժամանակվա հրեա գիտնականների բարդ լեզվին: Ահա որոշ առակների իմաստները: Թթխմորի առակի թեման նման է մանանեխի հատիկի թեմային, որն Աստծո արքայության ընդարձակումն է: Հիսուսի կողմից թթխմորի համեմատությունն Աստծո արքայության հետ. դա հիմնականում պայմանավորված է այն ազդեցությամբ, որ խմորիչը արտադրում է ալյուրի մեջ դնելուց հետո: Խմորիչը աճեցնում է խմորի ծավալը: Նույնը տեղի է ունենում, երբ Հիսուսի աշակերտներն ու հետևորդները Հիսուսի ավետարանի բարի լուրը տանում են աշխարհ, ինչը բազմապատկում ու աճեցնում է Աստծո արքայությունը ազգերի մեջ:

Թաքնված գանձի առակը Մատթեոսի ավետարանից է, որտեղ ասվում է. <> Այս առակը մեզ ասում է, որ գտնելով Հիսուսին՝ մենք գտնում ենք ամենաթանկ և արժոքավորն գանձը: Այսպիսով՝ արժե վաճառել կամ թողնել այն ամենը, ինչ մենք կարծում էինք, որ արժեքավոր է, որպեսզի ձեռք բերենք կամ թույլ տանք, որ Հիսուսը մտնի մեր սրտերը: Որվհետև որտեղ քո գանձն է՝ այնտեղ կլինի քո սիրտը: Հիսուսն ասում է, որ մենք պետք է փոխենք մեր հին մտածելակերպը, դադարել անհանգստանալ նյութական հարստությունների, նեղությունների, այս աշխարհի հոգսերի և այլնի մասին, որպեսզի կարողանանք հանգստանալ Հիսուսի մեջ,ով մեր ամենամեծ գանձն է: Անիրավ տնտեսի առակը. Տանուտերն Աստված է, տնտեսն էլ մարդն է: Աշխարհի բոլոր բարություններն Աստուծո ունեցվածքն են: Մարդը դրանց տերը չէ, այլ մատակարարող պաշտոնյան: Աստված աշխարհի բարությունները մարդուն է հանձնել, որ այս աշխարհում դրանք օգտագործելով՝ հանդերձյալ աշխարհի համար արդյունք և շահ պատրաստի: Աշխարհի բարիքները մարդու ձեռքում ժամանակավոր են: Մի օր դրանք այլևս ձեռքի տակ չպիտի ունենա: Աստված դրանք հանձնել է, որպեսզի նա որևէ ձևով օգտվի այդ բարիքներից, և երբ դրանք իր ձեռքից պակասեն, այսինքն՝ երբ մարդը մեռնի, իր ապագա կյանքում այս աշխարհի մատակարարությունից օգուտ քաղած լինի: Ուշագրավ է նաև օգուտ քաղելու ձևը: Երբ տնտեսը մուրհակները փոխել էր տալիս, նա կարող էր օգտվել տարբերության գումարից՝ նույն պահին պարտապաններից պատշաճ մաս ստանալով, բայց տնտեսի նպատակն էր շահել միայն պարտապանների երախտապարտությունը, որպեսզի երբ պաշտոնից ազատվի, նրանց տներում բնակություն և կերակուր գտնի: Նա ցանկացավ ընկերներ ձեռք բերել՝ մարդկանց լավություն անելով, որ ընկերոջն արած լավությունից մի օր էլ ինքը օգտվեր: Առակի նպատակն է հասկացնել և ուսուցանել, թե մարդ պարտավոր է ձեռքում եղած աշխարհի բարիքներից ընկերոջը օգուտ հանել, օգնել, նպաստել, ողորմել:,,Ոչ մի ծառա երկու տիրոջ ծառայել չի կարող,որովհետև եթե մեկին ատի, մյուսին կսիրի, կամ եթե մեկին մեծարի, մյուսին կարհամարհի: Չեք կարող և Աստծուն ծառայել, և մամոնային,, /Ղուկաս ԺՉ 1-13/:

«Աշխարհի որդիները» նրանք են, ովքեր ճարպիկ են ու խորամանկ և բոլոր գործերում իրենց շահն են փնտրում: Իսկ «լույսի որդիները» նրանք են, ովքեր, Աստծուն

սիրելով և հանդերձյալ կյանքի ձգտելով, չեն հոգում երկրավորի մասին, այլ միայն հոգևոր հարստությունն են արժևորում: Սակայն առաջինները նույնպես կարող են փրկվել վերջինների նման, եթե իրենց անօրինությունը գիտակցեն ու զղջան, եթե իրենց հանցանքները ընդունեն ու խոստովանեն, եթե ապաշխարեն ու փորձեն իրենց մեղքերը քավել՝ ներելով և ողորմություն անելով, քանզի «աղքատին ողորմություն տվողը փոխ է տալիս Աստծուն»: Հիսուսը այնպես է սովորեցնում, որ նրանց համար հեշտ լինի հիշել: Սովորաբար տպավորիչ օրինակը կամ առակը չի մոռացվում: ինչպես Հիսուսն ինքն ասաց, առակները օգնում էին զատորոշելու նրանց, ում «սիրտը կարծրացել էր» ճշմարտության հանդեպ: Իսկ ինչպե՞ս էին նրա առակները բացահայտում մարդկանց մղումները: Որոշ դեպքերում նա միտումնավոր կերպով էր առակներով խոսում, որ մղի իր ունկնդիրներին հարցեր տալու դրանց լիարժեք նշանակությունը հասկանալու համար: Խոնարհ մարդիկ այդպես էլ անում էին, իսկ հպարտ կամ անտարբեր մարդիկ՝ ոչ: Փաստորեն, առակների միջոցով ճշմարտությունը հայտնի էր դառնում նրանց, ում սիրտը ծարավ էր ճշմարտության, սակայն թաքնված էր մնում նրանցից, ում սիրտը հպարտ էր:

Հիսուսի առակներն ու օրինակները շատ առումներով էին օգտակար: Դրանք հետաքրքրություն էին առաջացնում մարդկանց մեջ՝ մղելով նրանց լսելու: Նաև պատկերներ էին ստեղծում մտքում, ինչի շնորհիվ հեշտ էր լինում հասկանալ: Ժայռի վրա կառուցել տունը. Ով որ ինձ մոտ է գալիս և իմ խոսքերը լսելով՝ գործադրում է դրանք, ձեզ ասեմ, թե նա ում է նման: Նման է այն մարդուն, որ տուն կառուցելու համար հողը խորն է փորում և հիմքը հաստատում ժայռի վրա: Երբ գետը, հեղեղներից հորդելով, զարկի այդ տանը, չի կարողանա խախտել այն. որովհետև տան հիմքը ժայռի վրա է հաստատված: Իսկ ով լսում է իմ խոսքերը, բայց չի գործադրում դրանք, նման է այն մարդուն, որ հողի վրա առանց հիմքի տուն է կառուցում. երբ գետը զարկում է դրան, այն իսկույն քանդվում է: Եվ ի՜նչ ահավոր է լինում այդ տան կործանումը: Ժայռը հենց Ինքը՝ Հիսուս Քրիստոսն է, իսկ ավազը՝ այս աշխարհը: Եթե քո կյանքը կառուցում ես այս աշխարհի վրա, ինչ-որ կառուցել ես, վաղ թե ուշ փլվելու է:Մենք պետք է իմաստուն լինենք, և մեր կյանքը կառուցենք Հիսուս Քրիստոսի վրա, այսինքն՝ ապրենք Նրա Խոսքի համաձայն: Այդ ժամանակ ոչ մի չարիք, նեղություն եւ դժվարություն չի կարող մեզ կործանել:Պետք է

Խոսքը ոչ միայն լսող լինենք, այլ նաև կատարող: Հավատի լույսը.Ոչ ոք ճրագը վառելուց հետո այն չի թաքցնի կամ կաթսայի տակ չի դնի, այլ կդնի աշտանակի վրա,որպեսզի ներս մտնողները լույսը տեսնեն: Այս առակով Հիսուսը ուզում է մարդկանց սովորեցնել, որ կարևորը մարդու ներաշխարհն է, ոչ թե արտաքինը: Մարմնի ճրագն աչքն է. երբ քո աչքն առողջ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի, իսկ երբ քո աչքը հիվանդ է, քո ամբողջ մարմինը խավար կլինի: Շատ անգամ մարդիկ տարված են արտաքին երևացող բաներ մաքրելով, մինչդեռ մեր ներսը լի է հափշտակությամբ և չարությամբ: Բայց երբ մարդը լսում, հավատում է Աստծո խոսքին, նրա մարմինը նմանվում է ճրագի, որն իրենից լույս է ճառագում, հետևաբար կարևորը մարդու հավատն է ու ներքին լույսը, այլ ոչ թե արտաքինը, որը շատ անգամ խաբուսիկ է:

Հիսուս Քրիստոսը լույսը համեմատում է մարդու բարոյական մաքրության, այսինքն՝ բարության, սիրո, ազնվության, իմաստության հետ, և ինչպես մոմը, որ դնում են վերեւում, որպեսզի լուսավուրի շրջապատը, այնպես էլ մարդը իր հոգու լույսը չպետք է թաքցնի, այլ ցույց տա և փոխանցի ուրիշներին: Նոր գինին հին տիկերի մեջ չի դրվում. Հիսուսի բերած համեմատությունների համաձայն՝ հին սովորությունները հնացած տիկերի են նման, իսկ Իր ուսմունքն ու քարոզները՝ նոր գինու: Հնի հետ դրանք անհարիր են, պետք է նոր գինին նոր տիկի մեջ լցնել, Նոր Ուխտը նոր օրենքներով կազմել, որպեսզի հաստատուն հիմքով պատրաստվի և պահպանվի: Սերմնացանի առակը. Մի սերմնացան ցանում է իր արտը:Սերմերի մի մասը ընկնում է ճանապարհի եզրին, սերմերը բաց են մնում և թռչունները դրանք ուտում են: Սերմերից մի քանիսը քարքարոտ ապառաժի վրա են ընկնում. Դրանք շուտ ծլում և կանաչում են, բայց երբ արևը ծագում է, ծիլերը խանձվում ու չորանում են, որովհետև խոր արմատներ չունեին: Սերմերի մի մասն էլ փշերի մեջ է ընկնում: Սրանք էլ են ծլում, սակայն մեծանալ ու պտուղ տալ չեն կարողանում, որովհետև փշերը բարձրանում ու խեղդում են ծիլերը: Մյուս սերմերն ընկնում են պարարտ հողի մեջ և աճելով ցորենով լի հասկեր են դառնում:Սերմերը բերք են տալիս մեկի դիմաց երեսուն, վաթսուն, հարյուր… Սերմնացանը Քրիստոս է, սերմը՝ Աստծո խոսքը, որն իր մեջ կրում է ճշմարիտ ու հոգևոր կյանքի սկիզբը: Արտը ողջ մարդկությունն է, Աստծո խոսքը միշտ նույն արդյունքը չի ունենում: Բոլորն էլ, երբ լսում կամ ընթերցում են Աստծո խոսքը,

ստանում են սուրբ սերմերի իրենց բաժինը, բայց թե դրանք ինչպե՞ս կաճեն՝ պայմանավորված է մարդու հոգևոր մակարդակից:

Առակում խոսքը 4 տիպի մարդկանց մասին է: Առաջին տիպի մարդիկ դրանք այն մարդիկ են, որոնց միտքը կարծր հողի նման չոր է: Երբ կարդում կամ լսում են Տիրոջ խոսքը անտարբերության արտաքին շերտը չի թողնում, որ հոգևոր սերմը թափանցի սրտի մեջ, և այն մնում է հիշողության մակերեսին և չար ուժերը՝ աշխարհի զվարճանքներն ու գայթակղությունները, թռչունների նման մարդկանցից հափշտակում են Տիրոջ խոսքը: Երկրորդն այն մարդիկ են, ովքեր լսելով Ավետարանի քարոզը սիրո, արդարության, ինքնազոհության մասին, անմիջապես բորբոքվում են լուցկու նման, բայց անմիջապես հանգում: Քարքարոտ տեղում միայն մանր խոտ է աճում, այդպես էլ այս մարդիկ հանդարտ կյանքի պայմաններում ընդունակ են կատարել ջանքեր չպահանջող մանր շատ գործեր: Նրանք դեմ չեն առաքինությանը, բարոյականությանը, սակայն կկամենային Երկնքի արքայություն մտնել առանց բարդությունների: Իսկ երբ համոզմունքների համար ստիպված տանջանքներ ու զրկանքներ են կրում, անմիջապես ուրանում են Տիրոջը: Եսասիրության քարքարոտ շերտը չի թողնում, որ Աստծո խոսքը հասնի ու արմատավորվի նրանց սրտում: Երրորդն այն մարդիկ են, ովքեր կամենում են միաժամանակ ծառայել և՛ Աստծուն, և՛ մամոնային Նրանք պիտանի չեն Աստծո արքայության համար, քանի որ կամենում են ապրել ըստ Աստծո օրենքների, բայց միաժամանակ չեն ցանկանում հրաժարվել աշխարհի ունայնությունից: Ի վերջո, աշխարհիկ հոգսերի, հետաքրքրությունների և հակումների հորձանուտը կլանում է նրանց իսպառ՝ հոգու միջից արտամղելով այն ամենն, ինչ լուսավոր է, խորհրդավոր և վեհ: Չորրորդն այն կատարյալ մարդիկ են, ում խոսքը գործից չի տարբերվում, ովքեր Աստծո խոսքը լսելով և ընդունելով՝ փորձում են ապրել աստվածահաճո կյանքով: Ճիշտ է, բոլորը միանման չեն կարողանում ավետարանական խոսքին հնազանդվել, քանզի մեկը պտղաբերում է երեսուն, մյուսը՝ վաթսուն, մյուսը՝ հարյուր, որը նշանակում է, թե մեկն ի վիճակի է կատարել մեկ երրորդն այն ամենի, ինչ իրենից պահանջում է քրիստոնեական հավատը, մյուսը՝ մոտավորապես երկու երրորդը, և միայն քչերին է հաջողվում կատարել ամեն ինչ լիարժեք և կատարելապես: Դրանք ընտրյալ

անհատականություններն են: Պահված գանձի օրինակը. Այստեղ շեշտը դրված է գանձի վրա, երբ հողագործը գտնում է այդ գանձը, նրա մոտ մեծ ցանկություն է առաջանում տիրանալ այդ գանձին՝ վաճառելով ամեն ինչ, ինչ որ ուներ: Ստացվում է, որ երկնային արքայությունը ժառանգելու համար պետք է հրաժարվել այս աշխարհում ունեցած հարստությունից: Ստացվում է, որ մարդը կարող է պատահաբար գտնել երկնքի արքայությունը և պետք է իմաստուն կերպով ընտրություն կատարել: Նոր կարկատանը հին հագուստի վրա .Այստեղ մեկնաբանությունը նույնն է ինչ Նոր գինին հին տիկերի մեջ չի դրվում առակում: Հիսուսի բերած համեմատությունների համաձայն՝ հին սովորությունները հնացած հագուստի են նման, իսկ Իր ուսմունքն ու քարոզները՝ նոր կտորի: Հնի հետ դրանք համադրելը անհարիր է: Պետք է նոր Ուխտը նոր օրենքներով կազմել, որպեսզի հաստատուն հիմքով պատրաստվի և պահպանվի: Ճրագի օրինակը.,,Եղիր Աստծո ճրագը, որ լուսավորես շրջապատդ,, Կարծում եմ ճրագը քրիստոնեությունն է, որը չէր կարող երկար ժամանակ ծածուկ մնալ ու գաղտնի գործել, միայն թե այդ լույսը համարձակ դուրս բերող էր պետք:

Որոմի առակը. Ագարակատերը Հիսուսն է, իսկ ագարակը՝ աշխարհը: Ցորենի սերմերը բարի, իսկ որոմի սերմերը չար մարդիկ են: Բարի մարդկանց գործերը բարի պտուղներ են տալիս, չարերինը՝ չար: Ցորենն ու որոմն առանձնացնելը նշանակում է, որ ամեն մարդ իր գործերի համար արժանի հատուցում պետք է ստանա: Իսկ չար մարդիկ միանգամից չեն պատժվում, քանի որ այդ դեպքում հնարավոր է նեղություն կամ վիշտ պատճառել նաև բարի մարդկանց: Ու բացի այդ, յուրաքանչյուրին ժամանակ է տրվում զղջալու և ուղղվելու համար:

Աշակերտ լինելու գինը.Մարդկայնի կյանքը աշտարակի կառուցման նման է, որի հիմքը մարդու սերն է: Հիսուսին հետևելու իմաստը փրկությունն է, որի համար անհրաժեշտ է սիրել Աստծուն ամբողջ հոգով ու մտքով: Եվ Հիսուսին հետևելուց առաջ մարդը պետք է հաշվի նստի ինքն իր հետ և հասկանա այն գինը, որ պիտի վճարի՝ հիսուսին աշակերտ լինելու համար: Անառակ որդին.Այստեղ երևում է Աստծու հանդեպ մարդու հիմնական մեղքը՝ անհնազանդություն: Մարդն ուզում է իր կամքը կատարել և թողնում է Աստծուն: գնում է,, հեռու երկիր,, և իր կյանքը մեղքի մեջ անցկացնում:Հորից

ստացած ողջ օրհնությունն ու ժառանգությունը վատնեց ու կորցրեց:Նա կարծում էր, թե ազատություն կշահի, բայց իրականում կորցրեց այն՝ մեղքի գերի դառնալով:Հետո խելքի եկավ, գիտակցեց իր դժբախտությունն ու հիմարությունը: Մեր վատ վիճակի գիտակցությունը ապաշխարության տանող առաջին քայլն է: Հետո նա խոստովանեց իր մեղքը և որոշեց հրաժարվել մեղքից և հոր տուն վերադառնալ:Նրա ապաշխարությունն ամբողջական էր:Ճշմարիտ ապաշխարության մեջ նաև խոնարհություն կա:Ուշագրավ է որդու խոստովանությունը.,,Մեղանչեցի երկնքի և քո առաջ,,:որևէ մեկի առաջ գործած մեղքը նաև Աստծո դեմ է ուղղված:Ըստ էության բոլոր մեղքերն էլ Աստծու դեմ են: Հայրը սպասում էր իր կորած որդուն:Նույնիսկ մինչև խոստովանությունը հայրն արդեն իսկ ներել էր որդուն: Տղան արժանի չէր որդի կոչվելու, բայց հայրը վարվեց ոչ թե նրա արժանիքների, այլ իր սիրո և շնորհի համաձայն:Ահա թե ինչպես է Աստված վարվում բոլոր ճշմարիտ ապաշխարողների հետ:Ինչպես հովիվն ուրախացավ կորած ոչխարը գտնելիս/տուն 6/, այնպես էլ հայրը՝ իր որդուն գտնելիս: Այս առակից պարզ է դառնում Աստծու ողորմությունն ու սերը այն մարդկանց հանդեպ, ովքեր իրեն են գալիս զղջալով:

Փարիսեցիների նման ավագ որդին էլ էր արդար համարում իրեն.,,Այսքան տարի է քո հրամանները զանց չեմ արել,,,- ասաց նա. Չէր ուզում իր եղբորը ներել ու սիրել:Նա զայրացած էր հոր վրա և սառնասիրտ էր դարձել:Այժմ մեղավորը, Աստծուց հեռացածը ինքն էր. Նախանձը մեծ մեղք է Աստծու առջև:Հայրը ավագ որդուն էլ էր սիրում.աստծու շնորհն անսահման է: Հայրը բացատրեց որդուն հանդիսության պատճառը, որը բնավ կրտսեր որդուն ավագից առավել պատիվ տալը չէր.իր ուրախությունն էր արտահայտում որդու վերադարձի առթիվ: Ուշագրավ է նաև հոր համբերությունն ու բարությունը ավագ որդու հանդեպ. Հեզությամբ համոզելը ստիպելուց լավ է:Մեզանից յուրաքանչյուրը,,կորած որդի,,, նույնիսկ,,ավագ եղբայր,, է: Ղուկասի ավետարանը հայտնի է իր առակների ճոխությամբ,,Կորած ոչխարի մասին,, պատմող առակում պատկերված է Տիրոջ սերը:Աստված այնքան է սիրում մարդկանց, որ ամեն ջանք գործ է դնում, որ հետ բերի մեղավորին իր արքայություն:

Քրիստոս ասաց. -Ո՞վ է այն մարդը, որ երբ 100 ոչխար ունենա,և կորցնի նրանցից մեկը, չի թողնի 99-ին և չի գնա կորածի հետևից և երբ որ գտնի, ուրախությամբ, ուսերի

վրա դնելով՝ տուն չպիտի բերի, չպիտի կանչի իր բարեկամներին, ուրախանա, որ կորած ոչխարը գտնվեց: Շատ հետաքրքիր է Քրիստոսի եզրափակիչ խոսքը. Երկնքում մի մեղավորի համար ավելի մեծ ուրախություն պիտի լինի,քան 99 արդարների համար, որ ապաշխարության կարիք չունեն:Մեկնությունները տարբեր են, ոմանք ասում են՝ այս 99-ը այն հավատացյալներն են, որոնք հավատարիմ են Տիրոջ պատգամներին և փորձում են ապրել առաքինի ու արդար կյանքով: Մեկ այլ տարբերակի համաձայն այս մարդիկ ննջեցյալ այն հավատավոր անձինք են/ սրբեր, մաքրակենցաղ մարդիկ/, ովքեր արդեն իսկ արժանացել են Տիրոջը տեսնելու երանությանը, բայց այս երկու տարբերակն էլ խոցելի է. 14 երկրի վրա չկա որևէ մեկը, որ մեղք չի գործել և կարիք չունի ապաշխարության, ինքնամաքրման . 2-րդ տարբերակն էլ խոցելի է այնքանով, որ Քրիստոս խոսում է այս աշխարհի մարդկանց մասին. Ուրեմն կա 3-րդ տարբերակ . ըստ որի՝Քրիստոս նկատի ուներ փարիսեցիներին ու օրենսգետներին, որոնք ավելի անկարևոր էին, քան ամենամեղավոր մարդը, ով դարձի է գալիս, զղջում: Ի՞նչ է ասում ավետարանական այս դրվագը մեզ այսօր, որքանո՞վ ենք մենք նման այն փարիսեցիներին և օրենսգետներին, ովքեր իրենցից բացի ուրիշ որևէ մեկին չէին տեսնում արդարության ճանապարհը բռնած. Չէ՞ որ այսօր եկեղեցի կարող է մտնել ցանկացած մարդ, բայց եկեղեցին նաև մաքրող հաստատություն է, չէ՞ որ ոչ ոք չի կարող կատարելապես մաքուր հոգով ու սրտով մտնել եկեղեցի: Այս առակի պատգամը այն է, որ կարողանանք մշտապես նախ մեր անձերը քննել ու տեսնել, որ ամեն պարագայի մենք ենք, որ ապաշխարության կարիք ունենք և ապաշխարության ճանապարհը բռնած մեկին տեսնելով՝ պիտի ուրախանանք: Չար մշակների առակը.Այն վեմը, որ կառուցողները անարգեցին, եղավ անկյունաքար.Տիրոջից եղավ այս, և մեր աչքին սքանչելիէ: Այս առակում ամեն մի դետալ հստակ խորհրդանիշ ունի: Այգին հրեա ժողովուրդն է, այգու տերը՝Աստված, մշակները այդ օրվա քահանայապետերն են, օրենսգետները, փարիսեցիները, հոգևոր իշխանությունը, որ իր վրա էր վերցրել ժողովրդին հոգևոր սնունդ տալու առաքելությունը, ծառաները բոլոր մարգարեներն են, ցանկապատը օրենքն է,որով հրեա ժողովուրդը կարողացավ պահպանել իր ազգային ինքնությունը, որդին Տեր Հիսուս Քրիստոսն է, որ եկավ հոր կամքով, որից էլ չամաչեցին փարիսեցիները և տարան Գողգոթա և սպանեցին: Վեմը

խորհրդանշում է հրեա ժողովրդին, որոնք, գերության մեջ գտնվելով, անարգվել են, բայց նրանցից դուրս եկավ մեսիան, բայց Քրիստոս նկատի ունի իրեն, որ եղավ անկյունաքարը և Տիրոջ կամքով եղավ:Առակը նաև այսօրվա համար 15 է իրական և այսօրվա համար մեծ խորհուրդ, հոգևոր պատգամ ունի: Այն ամենը, ինչ որ ունենք՝ բոլոր հաջողությունները, ձեռքբերումները, մերը չեն. Տիրոջն են պատկանում: Ի վերջո այգու այս օրինակը ոչ միայն եկեղեցին է խորհրդանշում, այլև մեզանից յուրաքանչյուրի կյանքը, որովհետև մեր կյանքն էլ Աստծու կողմից տրված նվեր է: Ինչպես մշակներին տրվեց այգինմշակելու ոչ թե սեփականաացնելու համար, այնպես էլ մեր կյանքը մեզ տրված է կարծես թե վարձով. մենք չենք մեր կյանքի տերը. սա է պատճառը, որ մենք ասում ենք՝ մարդ իրավունք չունի ինքնասպանություն գործելու: Մենք մեր կյանքում տեսնելու ենք աղքատ, ընչազուրկ, հիվանդ, մխիթարության կարոտ մարդկանց, ում պետք է օգնության ձեռք մեկնել, ում մեր նվաճումներից, մեր ձեռքբերումներից՝ հոգևոր թե նյութական,պետք է մի բան հատկացնել, որովհետև մերը չէ այս ամենը: Քրիստոս այս առակում սքանչելի կերպով ներկայացնում է Աստծու համբերատարության չափը: Ինչպես առակում մշակներին, այնպես էլ մեզ առաջին սխալը գործելուց հետո Աստված իր գթասրտությունից,բարեսրտությունից ելնելով,հնարավորություն է տալիս արժանի մշակ լինելու: Անպետք աղը՝Ժողովուրդ դուք աշխարհի աղն եք, դուք աշխարհի լույսն եք: Հանկարծ այդ աղը չանհամանա, հանկարծ այդ լույսը չմարի՝: Աղը նյութի մեջ լուծվելիս նրա էությունն ու արտաքին տեսքը չի փոխում, այլ միայն իր համն է տալիս. նույնպես և քրիստոնեությունը մարդու կամ մարդկային հասարակության մեջ որևէ արտաքին բեկում չի առաջացնում, սակայն ազնվացնում է մարդու հոգին և դրա միջոցով փոփոխում նրա ամբողջ կյանքը:,,Եթե աղը անհամանա,, ասելով՝ նա նկատի ուներ այն մարդկանց, ովքեր, մեկ անգամ ճաշակելով Սուրբ Հոգու հետ ազնիվ հաղորդությունը, այնուհետև ընկան աններելի մեղքի մեջ և այլևս առանց Աստծո առանձնակի օգնության ընդունակ չեն ոչնչով հոգեպես նորոգվել:

Այս առակները նպատակահարմար է մատուցել բազմազան մեթոդներով, այն է՝ կանխագուշակման մեթոդ, ԳՈՒՍ աղյուսակ, T-աձև աղյուսակ, Վենի դիագրամ, բազմաթև աղյուսակներ և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գիտամեթոդական գրականության ուսումնասիրումը, փորձնական դասերի վարումը, իրականացրած հետազոտական աշխատանքի արդյունքների վերլուծությունը հնարավորություն են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները.

- Առակի՝ որպես փոքրածավալ գրական ստեղծագործության գաղափարի բացահայտում, հիմք է հանդիսանում ավելի ծավալուն ստեղծագործությունների գաղափարի բացահայտման համար:
- Կարևորելով առակի դերը գաղափարի բացահայտման գործում՝ գտնում ենք, որ մայրենիի դասագրքերում ներառված առակները քիչ են. մինչդեռ դրանք պետք է շատ լինեն, քանի որ առակն առավել դաստիարակչական նպատակ ունեցող ստեղծագործություն է և օգնում է մարդուն իրական կյանքում ճիշտ կողմնորոշվելու և ավելի ճիշտ ապրելու:
- Առակի շուրջ իրականացվող բազմաբնույթ աշխատանքները, գաղափարի բացահայտման համար մեր կողմից մշակված և կիրառված առաջադրանքների համակարգը նպաստում են սովորողների վերլուծական - համադրական, քննադատա կան մտածողության, համեմատություններ, ընդհանրացումներ, եզրահանգումներ կատարելու, ստեղծագործական կարողությունների ձևավորմանն ու աշակերտների տրամաբանության զարգացմանը, առակի գաղափարի բացահայտմանն ու ենթատեքստի կռահմանը :
- Մեր կողմից կիրառված ուսուցման կազմակերպման ձևերը, փոխներգործուն մեթոդներն ու մեթոդական հնարները նպաստեցին առակի գաղափարի վերհանման, առակի դերի ու նշանակության արժևորման, արդյունավետ ուսուցման ու աշակերտների տրամաբանության զարգացմանը:
- Ուսումնասիրվող առակների գաղափարի բացահայտման աշխատանքները պետք է ունենան շարունակական բնույթ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստվածաշունչ մատյան Հին և Նոր Կտակարանների, Հայաստանի աստվածաշնչյան ընկերություն, Էջմիածին, 2017:
2. Գասպարյան Դ., Հայ հին և միջնադարյան գրականություն պատմություն, Երևան, Տիգրան Մեծ, 2009:
3. Գրականության տեսության արդի խնդիրներ, Ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 2016:
4. Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910:
5. Մելքոնյան Ս., Հովհաննես Շիրազ (գեղարվեստական վարպետության հարցեր), Երևան, Բարձրագույն դպրոց, 1993:
6. Մանուկյան Ս.Պ., Ընդհանուր մանկավարժություն: Նոր դասընթաց:Ուսումնական ձեռնարկ: Եր., Զանգակ-97, 2005, 560 էջ:
7. Նալբանդյան Մ., Մ. Նալբանդյանի ֆ., 8-1/(7), ԵՃԳԱԹ, «Լումա», 1900, գիրք 1:
8. Չիբուխչյան Կ.Գեղարվեստական ստեղծագործության դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները, Նախաշավիղ Եր., Լույս 4/2016:
9. Սանթոյան Մ., Գրականագիտական բառարան, Երևան, «Վան Արյան», 2009:
10. Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020: